ՆՈՐ-ԴԱՐ

№ 160 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի **1901** Երեքշաբթի, 30 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 160

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր., համարը 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

БОՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Ֆրանսական նաւատորմն արև լքում։
Քրոնիկոն. — Լուրեր։
Մեզ գրում են. — Ճամախուց։ Թաւրիզից։
Թատրոն։
Սիկերիադութիւն և ազատամտութիւն։
Թղթակցութիւն. — Նամակ Պարսկաստանից, Թաւրիզ։
Քաղաքական. — Թիւրքիա։ Ֆրանսիա։ Հեռագրական լուրեր։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանասիրական. — Յովհաննէս Ղազարեան Լազարեան։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 29 Հոկտեմբերի 1901 Թ.

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

—

Ֆրանսական նաւատորմը ծովակալ Կայեարի հրամանատարութեամբ արդէն հասել է թրքական ջրերը և գրաւել Միտիլեն կղզին և տեղւոյն մաքսային հաստատութիւններն իւր ձեռքն առել։ Վերջին հեռագրներից երևում է, որ ֆրանսական նաւատորմիղը շուտով ետ դառնալու միտք չունի, թէպէտ և թրքական կառավարութիւնը գիջումներ անելով ամեն կերպ աշխատում է այդ մասին։

Հեռագրներից գիտենք, որ ֆրանսական պարլամենտում այդ մասին խնդիր է յարուցուել, և պարլամենտական վիճաբանութիւններից պէտք է այն եզրակացութեան գալ, որ Ֆրանսիան իւր նաւատորմն ուղարկել է արևելք ոչ միայն ֆրանսահպատակ մի երկու սարրաֆի շահերը պաշտպանելու, այլ և Թիւրքիայում բնակւող քրիստոնեայ ժողովուրդների դրութիւնը բարւոքել տալու համար։

Վերջին հեռագրներն այդ մասին ոչինչ չեն հաղորդում, թէպէտև յայտնում են, որ ֆրանսական կառավարութիւնը Բ. Դրնից նոր պահանջներ է անում։ Ինչումն են կայանում այդ նոր պահանջները, —չէ ասուած. միայն իմանում ենք, որ սուլթանը համաձայնուել է վերաշինել տալու ինչ-որ եկեղեցիներ, վանքեր և այլ հաստատութիւններ, թւով 16 հատ, ոլոնք գտնւում են օսմանեան կայսրութեան զանազան վիլայէթներում։

Թէ ինչ եկեղեցիներ և վանքեր են, —յայտնի չէ մեզ։ Առ այժմ պարզն ու հասկանալին հեռագրական հետևեալ լուրն է, որ ստացուել է Քեօլնից. «Քեօլնի. լրագիրը» հաղորդում է, որ ֆրանսական դեսպանը Բեռլինում ներկայացրել է ֆրանսական կառավարութեան կողմից ֆրանսական ծովային արշաւանքի մասին բացատրութիւն։ Այդ բացատրութեան մէջ ասուած է. «Ֆրանսիան ամենեւին դիտաւորութիւն չունի (թրքական) հողեր գրաւելու։ Միտիլէն նաւատորմ ուղարկելու նպատակն է միայն և եթ՝ ստանալ ապահովութիւն այն պահանջների համար, որոնց կատարումը քանիցս խոստացել է Բ. Դուռը»։

Վերջին հեռագրից երևում է, որ Ֆրանսիան այնպիսի էլ պահանջներ չէ անում, որոնց կատարումը դժուար լինի թրքական կառավարութեան համար։

Միայն թէ արևելեան խնդիրը չյարուցուի, միայն թէ վերանորոգութիւններ մտցնելու խնդիրը չլինի, մնացածը թրքական կառավարութիւնը կըկատարէ, որքան էլ որ իրեն համար հաճելի չլինի։

Այդ հանգամանքը յայտնի է ամենքին, և մինչև օրս արևելեան խնդիրը՝ Թիւրքիայում վերանորոգումներ մտցնելու խնդիրն իբրև մի հրէշ նկարուել է պատի վրայ՝ երկիւղ, ահ ներշնչելու Թիւրքերին այս և այն նպատակի հասնելու համար, նպատակ, որ ամենևին չի վերաբերում Արևելքում ապրող քրիստոնեայ ազգերին։

Հէնց որ ֆրանսական կառավարութիւնն իւր պահանջների վերաբերութեամբ գոհացումն կըստանայ, ֆրանսական նաւատորմը կըհեռանայ թրքական ջրերից, իսկ Վալդեկ-Ռուսսօյի մինիստրութիւնը կըտօնէ իւր յաղթանակն իւր հակառակորդների դէմ։ Վարագոյրը կիջնի և հանդիսատեսները շուարած կըհարցնեն միմեանց՝ «Մի՞թէ ներկայացումը վերջացաւ»։

ՔՐՈՆԻԿՈՆ

—

Վեհափառ Կաթողիկոսն իւր օծման իններորդ տարեդարձի առթիւ մօտ տասը քահանայի վարձատրել է լանջախաչով և կամիլաւկայով։ Բացի դրանցից, վարդապետական խաչեր են ստացել Նոր-Նախիջևանի յաջորդ Մուշէ վարդապետը, Արսէն ա. քահ. Բագրատունի և Ստեփան քահ. Սամուէլեան։

— Վեհ. Կաթողիկոսը, թոյլատրելով որ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնում մի տարի ևս մնայ պ. Ս. Բալաղեանը, դպրոցի հոգաբարձութեանը պատուիրել է մայիսին անպատճառ նոր տեսուչ ընտրել հոգևորականներից։

— Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ գեր. Սուքիաս արքեպիսկոպոսը միջնորդել է Վեհ. Կաթողիկոսին յարգել Երևանի թեմական դպրոցի հոգաբարձութեան խնդիրը՝ յիշեալ դըպրոցի տեսուչ նշանակելու Մաթէոս վարդապետին։

— Մարցի կալուածների կառավարչի պաշտօնում հաստատուած է գիւղատընտես պ. Յ. Ճահբազեան։

— Քիշինևից մեզ հեռագրում են հոկտ. 24 ից. «Այսօր Քիշինևի հայ հասարակութիւնը հանդիսաւորապէս տօնեց կոնսիստորիայի անդամ Խալիպեան դպրոցի նախկին սան Բարսեղ ա. քահ. Ղազանջեանի քահանայագործութեան 35-ամեակը։ Ս. պատարագից յետոյ, որ մատոյց գեր. Ներսէս արքեպիսկոպոսը, բոլոր հիւրերը դիմեցին դէպի յոբելեարի բնակարանը։ Առաջնորդ սրբազանը ջերմ խօսքերով շնորհաւորեց յոբելեարին, որհնեց հասարակութեանը, որ այնքան սիրալիր ուշադրութեան առարկայ է դարձել իւր հոգևոր հօրը, արտայայտելով դէպի նա իւր անսահման երախտագիտութեան զգացումները։ Եկեղեցու երեցփոխ ինժեներ Խաչիկեան կարդաց հասարակութեան մատուցած մի փառաւոր ուղերձ։ Զատիկեանց քահանան զգացուած մի ճառ արտասանեց, շնորհաւորելով յոբելեարին ի դիմաց Օդէսի և Բելցկի հասարակութեանց։ Յոբելեարին մատուցուած են թանկագին նուէրներ։ Ստացուած են հարիւրաւոր հեռագրներ»։

— Կիրակի, հոկտ. 28-ին, ընտանե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ *)

(Նրա մահուան 100-ամեայ տարեդարձի առթիւ)

—

Լազարեանների տոհմը բաւականին հին, հռչակաւոր տոհմ է։ Նա յայտնի էր առաջ որպէս Եղիազարեան կամ Ղազարեան, բայց երբ տեղափոխուեցին Ռուսիա, յարմարուելով ռուսաց լեզուին, եղան Լազարեան։ Տասն և չորրորդ դարի վերջին տարիներն օրհասական էին հայերի քաղաքական կեանքի համար. իրաւ է, նա մի անգամից չկորցրեց իւր քաղաքական անկախութիւնը, ազատութիւնը, բայց և մի ամբողջութիւն չէր կազմում—չկար կեդրոնական իշխանութիւն։ Նա մաս-մաս էր եղել և բաժանուել զանազան իշխանների մէջ, որոնք՝ ունենալով իրենց զօրքը, տիրում և կառավարում էին գաւառներ իրենց գիւղերով, աւաններով ու քաղաքներով։ XIV դարի վերջերից սկսած մինչև XVIII դարն այդ իշխաններն էին պահպանում հայերի քաղաքական անկախութիւնը, բայց նրանք էլ շարունակ միմեանց հետ երկպառակութեան մէջ լինելով, շարունակ կռիւներ մղելով մահմեդական տիրապետողների դէմ և հարուածներ ստանալով նրանցից, քայքայւում, ուժասպառ էին լինում։ Նրանք հեռու և անզօր էին ընդհանուր քաղաքական կեանք, պետական այժ, իշխանութիւն ստեղծելու։ Քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, թուլացած, քայքայուած եղած ժողովուրդն սկսում է ապաստանարան որոնել այնպիսի տեղերում, ուր կարողանայ պահպանել իւր մի քանի նուիրական աւանդները, ազգային մի քանի առանձնայատկութիւնները։ Իւր ճգնաժամին ժողովուրդը դարձեալ պիտի մտածէր ապագայ գոյութեան մասին, նա պիտի ընտրէր՝ թէ որպիսի շահերի գերադասութիւն, առաւելութիւն պէտք է տալ ապագայի համար։ Գիտենք, որ արևելքում բացի հայերից եղել են և ուրիշ ազգութիւններ, որոնք ունեցել են իրենց քաղաքական կեանքը, անցեալը, բայց և այնպէս իսպառ անհետացել են, մինչդեռ հայերը, թէև կորցրել են քաղաքական անկախութիւնը, բայց կան մինչև օրս և պահպանել են որոշ չափով ազգային կեանքը. հայը պահպանել է հոգևոր ոյժերը իւր կրօնի, լեզուի և հարուստ հին գրականութեան շնորհիւ։ Կրօնը և լեզուն պահպանեցին հայ ազգութիւնը և եղան նրա կենդանութեան միակ աղբիւրը. ժողովուրդը եթէ պահպանել է իւր բարոյական պատկերը և ազգայնական առանձնայատկութիւնները, կրկնում եմ, այդ եղաւ միայն այդ երկու հզօր տարրերի շնորհիւ։

Սակայն մահմեդական միապետների բռնակալութեան ներքոյ կեանքը չէր ժպտում հայերին. ստիպուած էին կամայ-ակամայ գաղթականութեան դիմել։ Շահ Աբբաս I ի (1585—1628) ժամանակ նրա հետ անընդհատ կռիւներ մղողներից մէկը Մանուկ Եղիազարեան իշխանն էր, որ տիրում էր Հայաստանում մի որոշ երկրի։ Շահ Աբբասի թագաւորութեան ժամանակ շարունակ տեղի էին ունենում ներքին և արտաքին խռովութիւններ ու երկպառակութիւններ. մի քանի նահանգների կառավարիչները բաժանուել էին նրանից և նրան ճանաչել չէին կամենում։ Երկար և աշխատալից կռիւներից յետոյ Շահ Աբբասը տեսնում է, որ չէ կարողանում յաղթել հայ իշխաններին, դիմում է հնարաւորութեան և սիրով ու քաղցրութեամբ գրաւում նրանց։ Նա խոստանում է հայերին զանազան արտօնութիւններ, դրանով իւր կողմն է գրաւում բաւականաչափ հարուստ և ականաւոր հայ ընտանիքներ և բնակեցնում իւր Սպահան մայրաքաղաքում։ Եկողներին Շահ-Աբբասը տալիս էր պատուաւոր աստիճաններ և իշխանութիւն։ Երկարատև կռիւներից տանջուած լինելով և փոխադարձ օգուտները ի նկատի առնելով, Մանուկ Լազարեանն էլ վստահանում է իւր ընտանիքով տեղափոխուել և բնակութիւն հաստատել Սպահանում։

Շահ Աբբասի ժամանակ հայերը շատ նեղ օրեր են տեսել, սաստիկ չարքաշ կեանք են ունեցել։ Որպէս զի իւր տէրութեան արևմտեան սահմաններն ազատ պահէ օսմանցոց արշաւանքներից, նա մտածում է ամայի դարձնել այդ մասը մինչև օսմանցոց սահմանը մի կողմից, իսկ միւս կողմից—մինչև Նախիջևան, Երևան, Դաւրէժ, որ օսմանցոց զօրքը պարսից սահմաններում ուտելու ոչինչ չգտնէ։ Նա հրամայում է մահմեդականութիւն ընդունած վրացի Ամիր-Գիւնա-խանին, որ երեք օրում հայերին դուրս հանէ այդ կողմերից և քշէ դէպի Ջիրազ, Խորասան, և որպէս զի հայերը չկարողանան վերադառնալ, հրամայում է, որ կրակ տան անասնները, շինութիւնները, հացի ամբարները և թունաւորեն ջրհորները։ Անգութ խստասրտութեամբ է կատարւում այդ հրամանը։ Ժամանակակից հայ պատմագիր Առաքել վ. Դաւրիժեցին սաստիկ սրտաճմլիկ կերպով է նկարագրում այդ հրամանի գործադրութիւնը, և թէպէտ այս նկարագրութիւնը փոքր ինչ երկար է, բայց մի քանի կտորներն աւելորդ չի լինիլ առաջ բերել մեր ժամանակի կարծրացած սրտերի համար. «Եւ զօրապետացն,—ասում է պատմագիրը,—յետ ընդունելոյ այսպիսի դաշնահրահանգ հրաման ի թագաւորէն, եղեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառն աշխարհիս հայոց. և իբրև հողմախաղան հուր ընդ եղէգն ընթացեալ, հալածեալ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչս գաւառացն կորզեալք յիւրաքանչիւր բնակութեանց, և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրև զՋոկս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ ածեալ բերին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ»... Փոքր ինչ յետոյ նա այսպէս է շարունակում իւր պատմութիւնը. «Եւ այնուհետև ոչ թողացուցին պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ՝ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով զանելով, և զոմանս զունկս և զականջս հատանելով, և զոմանս զգլուխն կտրեալ ի ձող ցցէին, որպէս զերբայր Առաքել կաթուղիկոսին, որում անուն էր Յոհանջան, զորս և զայլոց ումեմն առն զգլուխն կտրեցին, և ի ձող ցցեցին յերգ գետոյն Երասխայ. զայսուիկ և առաւել քան զայսուիկ խոշտանգանս կտտանաց ածէին ի վերայ ժողովրդեանն ի յահ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զգետն»։ Պարսիկները, երկիւղ կրելով որ մի գուցէ օսմանցոց զօրքը վրայ հասնի, վնասներ տայ և կամ, ժողովուրդը յափշտակելով նրանցից, յետ դարձնէ, ստիպեցին հայերին շուտով գետն անցնել։ «Եւ ի զօրացն պարսից,—շարունակում է նոյն պատմագիրը,—որք վարիչք էին կարգեալք ժողովրդեանն, շրջապատեալ ըզժողովրդեամբն պահէին՝ զի մի ոք փախիցէ, այլ և փայտիւ գանեալ, հարեալ, բեկեալ, մղեալ ի գետ անդր լնուին»։ Սոսկալի, արհաւիրքներով լի է այդ տեսարանի նկարագրութիւնը։ «Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ, զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գըտանիւր. և առ հասարակ աղիողորմ ողբս և յորդ արտասուս յաչաց հեղեալ առաքէին երկրորդ Երասխ՝ և ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կականաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ զոչեցուցանէին ուժգին աղաղակս, իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր»... «Եւ անողորմ զօրացն պարսից վարեալ զժողովուրդն լնուին ի գետն, և նոքա ի մէջ գետոյն ևս քան զեւ բազմացուցանէին զձայն աղաղակին և զողբոյն ի վտանգէն։ Եւ ոմանք ի նոցանէ կալեալ զեզերս նաւացն, և ոմանք զտփոցն, և ոմանք զագիս ձիոց և գեզանց, և գզօմչոց, և ոմանք իւրովք լողեալք անցանէին։ Եւ որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկտիք լցեալք էին յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զըխուռ ի ժամանակս գարնանայնոյ, և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձամղձ ջրոյն մեռան»։ Այդ դեռ բաւական չէ, պարսից զօրքից մի քանիսը, որոնք ուժեղ ձիեր ունէին, իրենք էլ քաջ և

*) Տես «Նոր-Դար» № 159.

կան մի համեստ շրջանում կատարուեց արժ. Գիւտ աւ. քահ. Աղանեանցի գրական-ուսուցչական գործունէութեան 25-ամեակը։ Մանրամասնութիւնները կըհրատարակենք առաջիկայ համարով։

— Ախալքաղաքի հայ կանանց բարեգործական ընկերութիւնը Վեհ. Կաթողիկոսին ընտրել է պատուաւոր անդամ։ Նորին Օծութիւնն այդ առթիւ օրհնութեան կոնդակ է ուղարկել ընկերութեանը։

— Կիրակի, հոկտ. 28 ին, գեր. Գար. եպ. Սաթունեանը ս. Սարգիս եկեղեցում հինգ հոգու քահանայ ձեռնադրեց, երկուսին — Թիֆլիսի, երկուսին — Ախալքալաքի գիւղերի և մէկին — Անափայի համար։ Նախորդ օրը, հոկտ. 27-ին, Վանքի աւագ եկեղեցու համար ժամանակաւոր սարկաւագ ձեռնադրուեց Սարգիս Խուցեան, որն աւարտել է Գէորգեան ճեմարանը։

— Մոսկուայից մեզ հաղորդում են, որ Լազարեան ճեմարանի հիմնադիր Յովհաննէս Լազարեանի մահուան 100-ամեայ յոբելեանի առթիւ հոկտ. 24-ին տեղւոյն հայ գաղութը մի փառաւոր ճաշ պիտի ունենար «Սլաւեանսկի Բազար» հիւրանոցի դահլիճում։

— Հոկտեմբերի 21-ին Թիֆլիսի հասարակաց գրադարանի դահլիճում կայացաւ Մոսկուայի կայսերական հնագիտական ընկերութեան Կովկասի ճիւղի հիմնադիր-անդամների առաջին ընդհանուր ժողովը, կոմսուհի տ. Ս. Ուվարովայի նախագահութեամբ։ Կոմսուհի Ուվարովան, ծանօթացնելով կանոնադրութեան ծրագրի մէջ մտցուած մի քանի փոփոխութիւնների հետ և բացատրելով ընկերութեան Կովկասի ճիւղի նպատակը, ճիւղը բացուած յայտարարեց։ Այնուհետև սկսուեցին ընտրութիւնները: Նախագահ ընտրուեցաւ միաձայն Լ. Գ. Լոպատինսկի, գանձապահ— Գ. Է. Մելլեր։ Ընկերութեան հովանաւոր ընտրուեց Կովկասի Նախկին փոխարքայ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայեւիչը, իսկ պատուաւոր անդամ ընտրուեցին Նոցին Կայսերական Բարձրութիւնները՝ Մեծ Իշխաններ — Թագաժառանգ Միխայիլ Ալէքսանդրովիչ, Նիկոլայ Միխայլովիչ և Գէորգի Միխայլովիչ, Կովկասի կառավարչապետ գեն. ադ. իշխ. Գ. Ս. Գալիցին, նրա օգնական գեն.-լէյտ. Ս. Ա. Ֆրեզէ, ամենայն հայոց Վեհ. Կաթողիկոսը, Վրաստանի էքզարխը, նոյնպէս և կոմսուհի Ուվարովան։ Ժողովին ներկայ էր ընդամենը 22 անդամ։ Ճիւղի տարեկան անդամավճարը 5 րուբլի է։

— Բագւում հոկտեմբերի 21-ին բացուած են ինժ. Ն. Ալիբէգովի ձեռներէցութեամբ հիմնուած հանրակրթական դասընթացները։ Աւանդուելու են տարրական առարկաներից սկսած մինչև բարձր գիտութիւնները։ Ուսանող են գրուած 200-ից աւելի մարդ։ Դասախօսութիւնները տեղի են ունենալու երեկոները։

— Մահմեդական մի քանի հասարակութիւններ լուսաւորութեան մինիստրութեան աջակցութիւնն են խնդրում Թրքաբնակ գիւղերում աղջկանց համար առանձին դպրոցներ բանալու։ Նրանք մատնանիշ են անում այն հանգամանքը, որ մահմեդական աղջիկներին կրօնը թոյլ չի տալիս միասին ուսանելու տղաների հետ։ «Նով.» լրագիրը լսել է, որ այս խնդիրքը կատարեալ համակրութիւն է գտել դպրոցական իշխանութեան կողմից։

— Այս օրերս Թիֆլիսում բացուած է Պուշկինի անուան քաղաքային երկրորդ տարրական դպրոցը։

— Թիֆլիսի քաղաքային խորհրդի հոկտեմբերի 23-ի նիստում տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան չորրորդ անդամի ընտրութիւն. ընտրուեց ինժեներ Տ. Էնֆիաջեան 27 ձայնով ընդդէմ 5-ի։

— Վճռուած է առաջիկայ տարուայ յունուարից խնայողական դրամարկղներ հիմնել լուսաւորութեան մինիստրութեան միջնակարգ և ստորին դպրոցներում, աղջկանց և տղայոց հոգևոր ուսումնարաններում, սեմինարիաներում և եկեղ.-ծխական դպրոցներում։ Խնայելիք դրամը կընդունուի մէկ, հինգ և տասն կոպէկանոց մարկերով:

— Մայրաքաղաքի թերթերի ասելով, մտադրութիւն կայ առաջիկայ ուսումնարանական տարում մասնագիտական դպրոցներ բանալու Կովկասում, Լեհաստանում, նմանապէս և Ղրիմում բացառապէս թոյլ կուրծք ունեցող ուսանողների համար։

— Խմբագրութիւնս ստացաւ Բենիկ վարդապետի «Քարոզչական Թոթովանքեր», Ա., Թիֆլիս, 1901 թ., էջ 83, գինը 25 կ.։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՇԱՄԱԽՈՒՑ.—Թիֆլիսի մի լրագրում այստեղից հաղորդուած մի լուր էր հրատարակուած։ Այդ լուրի մէջ ասուած էր, թէ երիտասարդ իրաւաբան Սարգիս Շամխարեանցին առաջարկուած է քաղաքագլխի պաշտօնը։ Ես այդ յայտնում եմ, որ մեր քաղաքում այդ անունով իրաւաբան գոյութիւն չունի։ Կայ մի պարոն Սարգիս Շամխարեան անունով, որ տեղիս քաղաքային երկդասեան ուսումնարանից չրջանաւարտ է եղել և այժմ քաղ. վարչութեան մէջ ժամանակաւորապէս ու առանց վարձատրութեան վարում է գրագրի պաշտօն։

ԹԱՒՐԻԶԻՑ (Պարսկ.).—«Նոր-Դար»-ի ընթերցողներին յայտնի է, թէ ինչ ապօրինի միջոցներով ընտրուեց մեր թեմի ներկայ առաջնորդը։ Չնայելով որ Ատրպատականի վարդապետ-առաջնորդը իւր գալստեան մասին Երևանից և Ջուլֆայից հեռագրել էր, չնայելով որ առաջնորդական-տեղապահ ծերունի քահանան օրեցօր աշխատում էր առաջնորդի ընդունելութիւնը կարելոյն չափ շուքով անելու,—այնուամենայնիւ ժողովուրդը կարծէք սիրտ չունէր առաջնորդական-տեղապահի աշխատութիւններին մասնակցելու։ Հոկտ. 13 ին քաղաքս ժամանեց նոր առաջնորդը: Ընդունելութիւնն աւելի քան անշուք եղաւ։ Ընդունելութեանը մասնակցողներից շատերը յանուն ոչ թէ նոր թեմակալի, այլ Ս. Էջմիածնի պատուին էին մասնակցում առաջնորդի ընդունելութեանը։ Ճշմարիտ, ցաւում ենք այս հանգամանքի վրայ:

— Պարսկաստանում, ինչպէս յայտնի է, թէ մամուլը, թէ գրականութիւնը և թէ թատրոնը կատարեալ ազատութիւն են վայելում։ Թատրոնը միմիայն հայերի մէջ գոյութիւն ունի Պարսկաստանում, և տարուայ ընթացքում տրւում են մի քանի ներկայացումներ՝ բարեգործական նպատակով։ Վերջերս քաղաքիս Լիլաւա թաղի թատերասրահում մի ներկայացում կար։ Այդ թաղի ուսումնարանն իւր հոգաբարձուների թւում ունի և մի Կ. Պոլսեցի հոգաբարձու։ Շնորհիւ յիշեալ հոգաբարձուի մի անտակտ վարմունքի, արտաքին գործերի մինիստրի Թաւրիզի ներկայացուցիչը յայտնեց, որ այսուհետև տրուելիք ներկայացումների համար նախապէս իրենից թոյլտուութիւն պիտի խնդրել (Պարսկաստանում օտարազգատաններն արտաքին գործերի մինիստրի իրաւասութեան տակն են ընկնում)։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Ուրբաթ, հոկտ. 26-ին, արտ. ընկ. թատրոնում հայ դերասանական ընկերութիւնը ներկայացրեց Նեմիրովիչ-Դանչենկոյի «Կեանքի արժէք»-ը 4 գործ. կոմեդիան, որն այս տարուայ կարճան սեզոնին առաջին անգամ խաղաց տիկ. Սիրանոյշի խումբը նոյն թատրոնում։ Խաղն անցաւ բաւական աջող. Ինչպէս առաջին անգամ, այս անգամ ևս առաջնութեան պսակը պատկանում էր տիկ. Սիրանոյշին և պ. Պետրոսեանին։ Խիստ ազդու էր մանաւանդ տիկ. Սիրանոյշի խաղը: Միւս դերակատարներից աչքի էին ընկնում տիկ. Մայսուրեան, պ. պ. Ալայեան և Ալիխանեան։ Թատրոնում աւելի շատ ժողովուրդ կար, քան նախորդ ներկայացումներին։

Մ.

Կիրակի, հոկտեմբերի 28 ին, Ածալեան ժողովրդական թատրոնում, հայկական բաժնի անդամների նախաձեռնութեամբ, խաղացին Է. Տէր-Գրիգորեանի «Բարեգործութեան դիմակի տակ» դրաման։ Դերակատարները բարեխիղճ կերպով էին վերաբերուել գործին և խաղացին մեծ յաջողութեամբ։ Գլխաւորապէս աչքի էին ընկնում իրենց մտածած խաղով տ. Մելիքեանը և պ. Ցարութիւնեանը։ Պիէսի ընտրութիւնը կարելի է յաջող համարել և յարմար՝ ժողովրդի համար, որովհետև պարզ կերպով հրապարակ է հանւում Կեղեքեանի (պ. Ցարութիւնեան) զզուելի և վաշխառուի տիպը, որ առանց խղճի խայթի հալումաշ է անում գիւղացիներին, բարեգործի դիմակը երեսին, և նրա աղջկայ Հեղինէի (տ. Մելիքեան) տիպը, որ որդիական ակնածութեամբ, միայն թէ աներկիւղ յանդիմանում և յորդորում է հօրը՝ թողնել իւր չարագործութիւնները, խղճալով խեղճ գիւղացուն։

Խ.

ԱԼԿԻԲԻԱԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏԱՄՏՈՒԹԻՒՆ

«Ազատամտութիւն» խօսքը տեղի թէ անտեղի մեզանում այնքան գործ է ածուել, որ շատ շատերին հասկանալի է *), իսկ «ալկիբիադութիւն» խօսքն էլ ուզում եմ ես աւելացնեմ հայոց բառարանի մէջ. Թէ որքան յարմար է այդ խօսքի գործածութիւն, թողնում եմ ընթերցողներիս։—Ալկիբիադէսը տարօրինակ բնաւորութեան տէր մարդ էր. նա հրճւում էր, երբ ժողովուրդն իւր մասին խօսում էր։ Մի օր՝ Ալկիբիադէսը մի շուն է առնում տասնեակ հազարներ վճարելով. երկար ժամանակ ժողովրդի խօսակցութեան առարկան էր այդ. ժողովրդի՝ իւր մասին խօսակցութիւնը վառ պահելու համար, քիչ ժամանակից յետոյ էլ կտրում է շան պոչը և այլ այսպիսի անմիտ բաներ է անում։ Հաչակ վաստակելու հեշտ միջոց։

Դու մի ասիր, որ մեր օրերում էլ Ալկիբիադէսին հետևողներ շատ կան, մինչև անգամ չափազանց շատ. միայն թէ՝ այդ մարդիկ ոչ թէ հազարներով փող են տալիս շուն առնում ու պոչը կըտրում, այլ մի բոլորովին տարբեր եղա-

*) Մեզ համար է, որ անհասկանալի է մնացել: Խմբ.

կարիճ մարդիկ էին, ձի հեծած պտըտում էին քրիստոնեաների մէջ և նկատում սրանց տղայոց և աղջկանց, և որոնց հաւանում էին՝ կին լինէր թէ աղջիկ և կամ տղայ, խաբում էին ծնողներին, թէ տուր որ անց կացնեմ գետի միւս կողմը, և երբ անց էին կացնում, չէին դնում գետնի վրայ, այլ տանում էին և տանում, ուր ուր կամենում էր: Ոմանք գողութեամբ էին տանում և տանում, ոմանք էլ յափշտակելով և կամ ծնողներին սպանելով։ Շատ մայրեր իրենց տղաներին և հիւանդներին թողնում էին ճանապարհին և գնում անհանդուրժելի և անըմբռնելի վտանգի պատճառով, որ հասել էր Նրանց։ Եւ միանգամայն ասում եմ,—շարունակում է Դաւրիժեցին,—անտանելի թշուառութիւններ և արհաւիրք հասան մեր ազգին, և ես չեմ իմանում, թէ ինչ ձևով հիւսեմ իմ լացն ու կոծը, ողբերգական ողբը հայկական ազգի բեկման մասին, որ այսքան չարակրութիւնների ընդունակ եղաւ։ Ձմեռը վրայ է հասնում Նրանց ճանապարհին. շատերը ցրտից և սովից մեռնում են. 60 հազար գաղթականներից Պարսկաստան են հասնում միայն 20 հազար հոգի։ Բայց որովհետև շահին լուր էին հասցրել, թէ հայերից շատերը, չկամենալով բաժանուել իրենց հայրենիքից, թաքն են կացել անտառներում, քարայրերում և քարանձաւներում, այդ պատճառով Նա զինուած մարդիկ է ուղարկում, որ փախստականներին կոտորեն։ «Եւ ոմանք կանայք՝ և տղայք և աղջկունք — ասում է Նրանց պատմագիրը, —որք մնացին ի սպանմանէն, իբրև տեսին զինքեանս մատնեալս ի ձեռս անիրաւ մարդադէմ գազանաց՝ որ վարեն զնոսա ի գերութիւն՝ և պէս պէս աղտեղութեամբ ապականեն զսրբութիւն նոցա, վասն որոյ լաւ համարեցան զսրբութեամբ մահն քան զապրուստ սուղ ինչ ժամանակաց կենաց, որ այն ևս մեղօք և չարակրութեամբ. բազումք ի նոցանէ պատէին զերեսս փակելովք և ձորձով իւրեանց և յանքաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս և մեռանէին»:

Անտոնիոս Գովէա եպիսկոպոսը, որ սպանացոց Փիլիպպոս III թագաւորի կողմից պարսից դուռն էր ուղարկուած և անձամբ տեսել էր գաղթականներին Պարսկաստան հասնելուց յետոյ, բացականչում է, թէ ինչու Աստուած այդպիսի տանջանքների է ենթարկում մի ժողովուրդ, որ ջերմ հաւատով դաւանում է Նրա վարդապետութիւնը. ընդ սմին նա այն կարծիքն է յայտնում, թէ հայերի վիճակը միայն այն ժամանակ կարող է թեթևանալ, երբ քրիստոնեայ միապետներից մէկը իւր իշխանութեան ենթարկէ հայերին շրջապատող մահմեդականներին: Բնակիչներին քշելու և անընդհատ տևող պատերազմների պատճառով արտերն անմշակ մնացին, եղաւ սաստիկ սով, ուստի ժողովուրդը սկսեց փախչել, ուր կարող էր. ոմանք դէպի Ռումելիա, ոմանք դէպի Մոլդաւիա, Լեհաստան, Խրիմ, Սև ծովի ափերը, Թաւրիզ, Արդաբիլ և նրանց շրջակայքը։ Սպահանի մօտ բռնութեամբ գաղթեցրած հայերը հիմնեցին (1605) Նոր Ջուղան, որ յետոյ նշանաւոր եղաւ իւր առևտրական յարաբերութիւններով Ռուսիայի և Արևմտեան Եւրոպայի հետ։ Նոր Ջուղայի գաղթականները հին Ջուղայեցիք էին։ XVII դարի քսանական թուականներին Նոր Ջուղայում մօտ 30 հազար բնակիչ կար և 20-ից աւելի եկեղեցի։

Բայց Շահ Աբբասը հասկանում էր և այն, որ տէրութեան ոյժը երկրի հարստութիւնն է, այդ պատճառով էլ նա առանձին ուշադրութիւն էր դարձնում վաճառականութեան վրայ և դրա համար էլ առանձնապէս հովանաւորում էր Ջուղայի հայերին, սիրում և պաշտպանում էր իւր հիմնարկած հայկական այդ նոր գաղութը: Մետաքսի արտօնութիւնը նա իրեն էր վերապահել և իւր կողմից առանձին գնով հայերին էր յանձնում, նրանք էլ այդ առևտրից մեծ օգուտներ էին ստանում: Ջուղայեցիներն առևտուր ունէին Ռուսիայի, Արևմտեան Եւրոպայի և Տաճկաստանի հետ, և նրանց միջոցով շահը նամակներ էր ստանում եւրոպական պետերից, որոնք հաղորդում էին գործերի վիճակը Եւրոպայում և թէ մանաւանդ Կ. Պոլսում:

Մի տեղ Առաքել պատմագիրն ասում է. «Եւ ինքն Շահաբաս առնէր սէր ընդ ազգին հայոց և մեծատունս նոցա, և մանաւանդ Ջուղայեցւոց, որոց գլխաւորի անունն էր խօջայ Սափար և սորին եղբօրն խօջայ Նազար, և որդւոց սոցին, Մէլիք աղայ և Սուլթանում, և Սարֆրազ: Եւ հանապազ ինքն շահն գայր ի տունս նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա առանց խտրելոյ, որպէս սովորութիւն է պարսից առնել խըտրութիւն ընդ քրիստոնէից. այլ և ինքն շահն կոչէր զնոսա ի տուն և ի սեղան իւր և պատուէր ընդ մեծամեծս իւր, այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել».... Եւ ապա մի ուրիշ տեղ ասում է դարձեալ Նազարի մասին. «Պետ և գլուխ էր խօջայ Նազարն ոչ միայն Ջուղայեցւոց, այլ և ամենայն հայկազուն քրիստոնէից բնակելոյն ընդ թագաւորութեամբ պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խօջայ Նազարն, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասի»։

Մանուկ Լազարեանն ունենում է մի որդի Ղազար անունով, իսկ Ղազարը— երկու որդի Մանուկ և Սափար. այս երկրորդ Մանուկից լինում է մի զաւակ Նազար կամ Նազարէթ անունով. իսկ սրա որդին է ի միջի այլոց երկրորդ Ղազարը, որ և ունենում է չորս արու զաւակ և մի աղջիկ —Յովհաննէս, Մինաս, Խաչատուր, Յովակիմ և Աննա։ — Մսեր Մսերեանցը, առաջ բերելով Դաւրիժեցու խօսքերը, ասում է. «Այլ թէ սա այս Նազար՝ հայրն իցէ Ղազարայ թոռին Մանուկայ, թէ այլ ոք, զայդ ոչ բացայայտէ պատմագիրն, և ոչ որ առձեռն կան զարգիս տոհմագիրք Լազարեանց՝ նպաստեն ինչ ի բացայայտումն»։ Որքան յայտնի է, Սափարը Նազար անունով եղբայր չէ ունեցել, այլ երկրորդ Մանուկն է եղել Նրա եղբայրը։ Եւ եթէ ենթադրենք, որ Սափարն ունեցել է Նազար անունով եղբայր, դարձեալ հաւանական չէ թւում, որ Շահ-Աբբաս I-ի ժամանակից Մանուկի թոռը կարողանար այդպիսի բարձր դիրք ստանալ—լինել ոչ միայն Ջուղայեցոց պետը և գլուխը, այլ և պարսից թագաւորութեան ներքոյ եղող բոլոր հայ-քրիստոնեաներինը։ Եթէ Սիմէօն կաթողիկոսի տուած կոնդակը և վրաց Թէյմուրազ թագաւորի տուած վկայագիրը որ և է պատմական արժէք ունեն, եթէ հիմնուած են եղել որևէ պատմական փաստերի կամ ապացոյցների վրայ, որոնց հիման վրայ և տուած էր Եկատերինէ II-ի հրովարտակը,—դարձեալ չէ կարելի ենթադրել, որ այդ Նազարը երկրորդ Ղազարի հայրն է, որովհետև այդ հրովարտակում պարզ ասուած է, թէ Նազարի պապ Ղազարը Շահ-Աբբաս II-ի (1642—1666) օրով պարսից փողեքանոցի կառավարիչ և արքունի գանձարանի վերատեսուչ կարգուեցաւ։ Պարզ է, որ եթէ պապը, Ղազարը, Շահ Աբբաս II-ի ժամանակ է արժանացել այդպիսի պաշտօնի, թոռը չէր կարող պետ և գլուխ լինել Ջուղայեցոց Շահ-Աբբաս I-ի օրով։ Նոյն հրովարտակում ասուած է, ինչպէս մենք կըտեսնենք փոքր ինչ յետոյ, որ երկրորդ Մանուկի թոռը՝ Նազարի որդի Ղազարն է եղել Նոր Ջուղայի կառավարիչը Նադիր շահի օրով (1736—1747) և վայելել է պարսից կառավարութեան և շահի վստահութիւնը։

Նադիր շահի սպանութիւնից յետոյ Ղազար Լազարեանը, տեսնելով որ մի կողմից Պարսկաստանն անհանգիստ է, յաճախակի կրկնւում են ներքին և արտաքին խռովութիւնները, անհաստատ է նոյն իսկ շահերի գահը, իսկ միւս կողմից տեսնելով ռուսաց տէրութեան մարդասէր խնամակալութիւնը և գաղթականներին տուած առանձնաշնորհութիւնները, գաղթում է Ռուսիա (1749 կամ 50), բերելով հետը ընտանիքը, նշանաւոր հարստութիւն և թանկագին ակնեղէններ: Թէ որքան ունևոր էր Լազարեանը, այդ մասամբ երևում է և նրանից, որ Սպահանում թողած մեծ քարէ տունը դեռ մինչև անցեալ դարի կէսը տեղական փաշայի և խանի պալատն է եղել։ Նա ունեցել է և կալուածներ Նոր Ջուղայի շրջակայքում: Ղազարի Աննա աղջիկը, որ կնութեան էր տուած Յովհաննէս Սմբատեանցին, մեռնում է 1769 թ. մայիսի 18-ին, թողնելով մի տղայ Նազար անունով և հինգ աղջիկ—Մարիամ, Աննա, Կատարինէ, Նադեժդա (Յոյս) և Յուստինէ։

(Կը շարունակուի)

Մ. Բարխուդարեան

նակով են Ալկիբիադէս դառնում: Միմիայն սրատես աչքը կարող է նկատել ցիլինդրների, ֆրակի և կամ ֆարաջայի տակ ծածկուած մեր ալկիբիադէսներին, որոնց իղձալն է միմիայն «անուն հանել», ինչ միջոցներով ուզում է լինի, կամ մեր նոր խօսքով՝ «ալկիբիադութիւն» անել։

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանն ասում են թէ՝ ազատամիտ է, գործունեայ հոգևորական է, քաջ հովիւ է, իր անձնական շահերը զոհում է ընդհանուրի շահերին և այլն այսպիսի խօսքեր: Խօսքերիս ճշմարտութիւնը հաստատելու համար, ընթերցող, հարցրու մէկ «ականի» և նա վերոյիշեալ խօսքերը թութակի նման կկրկնէ քեզ։ Մեր ամենամեծ ազատամիտը Քրիստոսն էր՝ որ ասաց «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» և այդ ցոյց տուաւ խօսքով և գործով։ Արիստակէս սրբազանն էլ որովհետև ազատամիտ է՝ քարոզում է «հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց», իսկ ինքը փախուստ է տալիս հօտից. այս նոր տեսակի ազատամտութիւն է։ Առլպատականի ժողովուրդն ընտրեց նրան միաձայն իրեն առաջնորդ, բայց մեր «ազատամիտ», «գործունեայ», «իր անձը հօտի համար զոհող» սրբազանը փափուկ բարձերից չուզեց բաժանուել։ Չէ՞ որ զինուորի քաջութիւնը պատերազմի դաշտում կե րևայ .. Բայց, ներեցէք, գուցէ ես սխալուած եմ. գուցէ կան այնպիսի մարդիկ, որոնք սածիս հակառակը պիտի պնդեն. հարցրէք մեր միջազգային տիրացուների կոմպանիայից, պատրաստի պատասխաններ ունին նրանք։ Նրանք այնքան յանդուգն են, որ մինչև իսկ վախենում եմ՝ որ միրուքաւոր երեխայ անուանեն նրան, եթէ նախապաշարուած չլինեին։ Սինոդի օրագրութիւնները տպել տալով, հոգևոր ծայրագոյն իշխանութեան հրամանին լմբոստ գտնուելով, ամեն տեղ «ազատամտութիւն» քարոզելով՝ մարդ ազատամիտ չի դառնալ. հարկաւոր է գործ, օրինակ, անձնական շահերի զոհումն, այն ժամանակ ես ինքս կըգոռամ՝ «կեցցէ ազատամտութիւն, կեցցէ յառաջադիմութիւն»։ Մենք մի երկու խօսք ենք անգիր արել և տեղի թէ անտեղի գործ ենք ածում. «յառաջադիմութիւն» ենք բղաւում, առանց մի քայլ անգամ տեղներիցս շարժուելու, և զարմանալին այն է, որ յառաջադիմութեան անունով գոռում-գոչում անողներն են, որ չեն ուզում ոտը տեղից շարժել, նման այն վատ զօրապետին, որ պատերազմի ժամանակ յետ յետ է քաշւում իւր անձը վտանգի չենթարկելու համար, կամ նման այն վախկոտ նաւապետին, որ սաստիկ ալեկոծութեան ժամանակ իւր կեանքը փրկում է փախուստով, թողնելով հարիւրաւոր մարդիկ ալիքների քմահաճոյքին... Առակն է անխոտելի. ա՛յ կուժ, քեզ ասեմ՝ ա՛յ կուլա, դու իմացիր։

Չկայ արարած աշխարհում կենդանի թէ անկենդան արարած, որ չշարժուի իւր տեղից, առաջ չգնայ, չկատարելագործուի. ամբողջ տիեզերքն իւր անհուն, անթիւ մարմիններով շարժւում է, վազում է դէպ առաջ։ Մենք էլ բնութեան մի մասն ենք կազմում. մենք էլ ենք շարժւում, առաջ գնում, բայց որոշ չափի ու սահմանի մէջ. եթէ արագացնենք մեր քայլերը, գուցէ հասնենք անդնդին. կամ գուցէ հէնց մենք անդընդի ծայրին ենք կանգնած, այն ժամանակ ո.բ վազենք... անդունդ. եթէ ցանկացող կայ, թող ինքը գլորուի, իսկ մենք դեռ շատ ենք ուզում ապրել։ Պատահել է ձեզ տեսնել, ընթերցող, գաւառացի օրիորդի, որ երբ քաղաք է մտնում, իրեն կոկում, զարդարում է, կակաչի պէս պճնւում, գլխին ծաղկազարդ գլխարկ դնում, երևակայում իրեն կըրթուած, արիստոկրատ, բայց «գոյնք երեսաց և քայլք ոտից յայտ առնեն ըզ·

Մեր ազատամիտները յիշեցնում են այդպիսի մի օրիորդի, զինուած, պճնուած «ազատամտութիւն», «յառաջադիմութիւն» ձևական խօսքերով: Այդպիսիները ոչ այլ ոք են, եթէ ոչ Ալկիբիադէսի հաւատարիմ հետևողները։ Մեզանում ամեն ոք, այո, ամեն ոք ազատամիտ է՝ լոկ խօսքերով, իսկ երբ բանն ընկնի գործի՝ ամենքն էլ խաւարամիտ են։ Ի հարկէ, բացառութիւնը միշտ յարգելի է: Ինչպէս առածն է ասում՝ «ամենքս էլ մի ամանով ջուր խմած մարդիկ ենք»։ Բայց Ալկիբիադէսի ոսկրներին հանգիստ չենք տալիս, նախանձում ենք նրան. ուզում ենք նմանուել, և մեր արածները «յառաջադիմութիւն, ազատամտութիւն» խօսքերի տակ ոչ այլ ինչ են, եթէ ոչ ալկիբիադութիւն և միմիայն ալկիբիադութիւն։

Միթէ պատերազմի դաշտից փախչող զինուորը չքանչանի արժանի է։

Մենք չափազանց ազատամիտ ենք. մեզ համար նշանակութիւն չունի կրօնը, դաւանութիւնը, այսօր հայոց եկեղեցում ենք աղօթում, վաղը կարող ենք գնալ մզկիթ, չօքել և երեսս կրկնել «լա՛ իլլա՛ լահ իլլահ, Մուհամմէդ ռասուլ-լահ...»։ Չէ՞ որ ազատամիտ ենք։ Միթէ խտրութիւն պէտք է դնել կաթոլիկ, բողոքական, բազդէական և այլ եկեղեցիների մէջ մենք խաւարամիտ հօ չենք։ Ահա այդ օրինակ ազատամտութիւն է՝ որ ըստ բանաստեղծի՝

«Տեղը եկաւ՝ հայ է,
Տեղը եկաւ՝ այլազգի.
Իրօք՝ ոչ այս է, ոչ այն,
Այլ խառնուրդ մի նոր ազգի»։

Ազատամտութիւնը խօսքերի մէջ չըպէտք է փնտռել, այլ գործի. եղի՛ր խոհուն գործիչ, և ես պատրաստ եմ ոտքերիդ փոշին լեզուով մաքրելու։ Մեր այժմեան ազատամտութիւնը և ալկիբիադութիւնն այնքան սերտ կապուած են իրար հետ, որ շատ անգամ դժուարանում ես որոշել՝ ո՛րն է ալկիբիադութիւնը և ո՛րը՝ ազատամտութիւնը։

Այն անձինք, որո՛նք գոռում գոչումով ի լուր աշխարհի յայտնում են թէ՝ մենք ազատամիտ ենք, մենք յառաջադիմական ենք, լաւ իմացէք, որ այդ գոռում գոչումը նմանում է այն հաւի կըկչոցին, որ մարդու ականջ է տանում իւր կըրկչոցով՝ թէ հա՛յ, հարա՛, լսեցէ՛ք, իմացէ՛ք, մի հատ ձու եմ ածել...

Գոնէ մեր ազատամիտները մի հաւի ձու էլ է ածէին...

Սևայր

Թաւրիզ, 10 հոկտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

ԹԱՒՐԻԶ 15 հոկտեմբերի.—Պարսկական ազգային հագուստը շատ առանձնայատուկ բնաւորութիւն ունի։ Այդ հագուստը բաղկացած է լինում մի շապկից և շապկներից, որոնք հասարակ կտաւից են շինուած լինում։ Շապկի և շապկնկերի վրայից պարսիկը հագնում է մի երկար մահուդէ կաբա, որ իջնում է մինչև ոտները, իսկ կաբայի վրայից առնում է աբա։ Պարսկի գօտին, ինչպէս և աբան, շինուած է լինում զանազան կտորներից, նայելով որ հագնողը ո՛ր դասակարգին է պատկանում—հարուստ, միջակ, թէ աղքատ։ Կարողութեան տէր եղող պարսիկն ունենում է և գէյման (սերտուկի նման մի զգեստ)։ Ու եթէ նա հագած է լինում այդ գէյմանը և օրն էլ շոգ է անում, նա հանում է իւր աբան, ծալում և կռան տակ դնում։ Սա էլ պիտի ասել, որ պարսիկն իրաւունք չունի առանց աբայի փողոց դուրս գալու, մանաւանդ եթէ գէյման էլ չունի հագին։ Քաղաքի դատաւորին, մուշտայիդին և կամ Թագաժառանգին ներկայանալիս, [illegible]

ռայում են որպէս ձեռքերի պատսպարան ցրտից։ Եթէ պարսիկն ուզում է խորին յարգանք ցոյց տալ մէկին, աբայի աջ կողմի բացուածքից հանում է իւր ձեռքը նրան ներկայանալիս։ Հիւրընկալը, ի նշան փոխադարձ յարգանքի, շնորհակալութիւն է յայտնում և խընդրում է հանգիստ նստել։ Նստել՝ մեզանում նշանակում է չոքել: Այդպիսի նըստելուն պարսիկն այնքան վարժուած է, որ կարող է նա 10 ժամ անընդհատաբար և անշարժօրէն չոքած մնալ։

Միայն զինուորականներն են մեզանում, որ աբա շատ չեն գործածում. բայց նոյն իսկ սրանք մուշտաիդին ներկայանալիս պիտի աբա հագած ունենան։

Աբան, եթէ կարելի է այսպէս ասել, մեր ազգայնական զգեստների թւում առաջին յատկանշական տեղն է բռնում, այնպէս որ մեր շահն ու նրա ժառանգն էլ են այդ զգեստը հագնում, երբ պիտի մասնակցեն որևէ հոգևոր արարողութեան կամ հոգևոր ներկայացման:

Ոտնամանը մեզնում զանազան ձևի ու տեսակի է լինում: Հաջու կօշիկը մի տարօրինակ ձև ունի և նման է սրըշաւոր փայտեայ մի գդալի. այդ կօշկի գոյնը կանաչ է. կան և Ախալցխայում գործածուող տափակ չուստի նման կօշիկներ և կռնաւրար (կիսակօշիկ) կոչուող ոտնամաններ։ Այս վերջին ձևի կօշիկները պատրաստւում են ատ հասարակ տեղական կաշիներից։ «Եամանի» կոչուող մի տեսակ կօշիկ էլ են գործածում այստեղ. դա լինում է դեղնագոյն և առաւելապէս մշակ դասակարգն է գործածում։ Զուստը և գիւա կոչուած մի այլ ձևի կօշիկ հագնում է մեզանում այսպէս կոչուած լօթի դասակարգը։ Դիւան ամառային մի տեսակ կօշիկ է, որի երեսը գործուած է լինում բամբակից և երբեմն էլ աբրէշումից։ Եւրոպական ձևի կօշիկն ու կիսակօշիկը նոր-է մուտք գործում մեզանում։

Գ...եան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

Այն լուրը, թէ Մուշի հայերը դիմել են Վանի ռուսաց փոխ-հիւպատոսին խնդրելով որ իրենց ընդունեն ռուսաց եկեղեցու գիրկը, մեծ տպաւորութիւն է թողել թուրք կառավարչական շրջանում: Կ. Պոլսից հեռագրում են եւրոպական թերթերին, թէ Դուռն շտապել է Բիթլիսի վալուն յանձնարարել մանրամասնաբար քննելու այն պատճառները, որոնք դրդել են հայերին այդ քայլն անելու, և աշխատել նրանց կարիքները լրացնելով յետ կանգնեցնել նրանց իրենց դիտաւորութիւնից։ Միևնոյն ժամանակ Դուռը հրաման է տուել Էրզրումի և Վանի վալիներին, որ միջոցներ ձեռք առնեն դադարեցնել տալու իրենց նահանգներում ապրող հայերի դժգոհութիւնները:

—«Berl. Tag.»-ի Կ. Պոլսի թղթակցի ասելով, սուլթանը մտադիր է մի առանձին պաշտօնական պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ պարզաբանելու համար հայկական և մակեդոնական խառովութիւններին վերաբերեալ խնդիրները, նմանապէս և Կրետէն Յունաստանի հետ միացնելու խնդիրը։ Պետերբուրգի թերթերի ասելով, այս լուրը ճշտւում է։ Պատգամաւորութեան համար շքեղ օթևաններ են պատրաստւում մայրաքաղաքի ամենալաւ հիւրանոցներից մէկում։

—«Berl. Tag.»-ի Կ.Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ շուտափոյթ Կ. Պոլիս է կանչուած Ադրիանուպոլսի վալի Արիֆ-փաշան, հիւանդացած մեծ վեզիրին փոխարինելու համար: Թղթակիցն Արիֆ-փաշային մեծ վեզիր նշանակելը նպատակայարմար է համարում շատ խնդիրների լուծման համար, որովհետև այդ փաշան [illegible]

—«Mém. Dipl.»-ը հաղորդում է, թէ շուտով Թիւրքիայի և եռապետական դաշնակցութեան միջև զինուորական պայմանագիր է կնքուելու։

—Ռուսաց դեսպան պ. Զինովևը Բ. Դրանը յայտարարել է, թէ Ռուսիան պէտք է հրաժարուի ֆրանս-թրքական վէճին միջամտելուց։ Ռուսաց կառավարութիւնը խորհուրդ միայն կարող է տալ, որ օսմանեան կառավարութիւնը զիջող լինի, այլապէս վէճը ծանր հետևանքներ կարող է ունենալ Թիւրքիայի համար։

—Բրիւսէլի «Petit Bleu»-ին հաղորդում են Պետերբուրգից, թէ ռուսաց կառավարութեան և եւրոպական պետութեանց կառավարութիւնների միջև բանակցութիւններ են լինում Բեռլինի դաշնագիրը վերաքննելու մասին։ Ֆրանսիան և Գերմանիան արդէն իրենց կարծիքն են յայտնել գլխաւոր կէտերի մասին։ Բացի դրանից, իտալական թագաւորի անձնական մասնակցութեամբ պետութիւնների միջև համաձայնութիւն է մշակւում բալկանեան խնդրի վերաբերմամբ:

—Կ. Պոլսից «Ռոսսիա» թերթին հեռագրում են, թէ հրամայուած է սպառազինել թրքական զօրքերը։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսական մամուլը ողջունում է ֆրանսական նաւախումբը թրքական ջրերն ուղարկելը։ «Temps»-ն ասում է.

«Ֆրանսիան համբերեց չափազանց երկար։ Եռանդի այն պակասութիւնը, որ նա ցոյց տուեց հայկական կոտորածի ժամանակ, խիստ երերել էր նրա հեղինակութիւնն Արևելքում։ Ֆրանսիայի խօսքը Կ. Պոլսում կորցրել էր ամեն կշիռ։ Թուրքերն այլ ևս չէին հաւատում ֆրանսական սպառնալիքներին, ուստի և մեզ համար հասել է ժամը միջամտելու և վերականգնելու մեր ազգի հեղինակութիւնը։ Աւստրիան, Հիւսիսային Ամերիկան և Իտալիան նման դէպքերում խրատական օրինակ են տուել Ֆրանսիային»։

«Joural des Dèdats»-ն գրում է. «Ոչ-ոքի համար,—ոչ Կ.Պոլսում, ոչ ուրիշ մայրաքաղաքներում,—տարակոյս չի կարող լինել, որ Ռուսիայի և Ֆրանսիայի միջև կատարեալ համաձայնութիւն կայ ինչպէս այս խնդրի, այնպէս և միւս բոլոր խնդիրների վերաբերմամբ։ Այս բանին ապացոյց կարող է լինել այն, որ ռուսաց կառավարութիւնը, որին դիմել էին խնդրելով նրա միջնորդութիւնը, բաւականացել էր պատասխանելով որ ինքն արդար է համարում մեր պահանջները»:

Նացիօնալիստական մամուլը նոյնպէս հաւանութիւն է տալիս Վալդեկ-Ռուսսոյի կառավարութեան քայլին։ «Gaulois»-ն յայտարարում և, թէ այժմ ժամանակը չէ քննադատելու կառավարութեան քայլը, և աւելացնում է. «Մենք յարգանքով ողջունում ենք մեր այն ծովագնացներին, որոնք ֆրանսական նաւատորմիղը կըտանին Դարդանէլի ջրերը»:

Լրագրների ասելով, Լևանտ ուղարկուած պատերազմական ոյժերը բաղկացած են 2,500 զինուորից և 125 սպայից, որոնք իրենց հետ ունին 12 մեծ, 38 միջակ և 110 փոքր թնդանօթ։

«Liberté»-ի աշխատակիցներից մէկը զրուցատրութիւն է ունեցել մի դիւանագէտի հետ, որն ասել է, թէ հաւանական է, որ ֆրանս-թրքական վէճից միջազգային բարդութիւններ ծագին, և յայտարարել է, թէ Անգլիան ձգտում է խճճել իրերի դրութիւնն Արևելքում։ Ցիշեալ դիւանագէտն աւելացրել է, թէ կարող է պատահել, որ յարուցուի ամբողջ արևելեան խնդիրը։

—«Frank. Zeit.»-ի Պարիզի թղթակցի ասելով, վերջնականապէս վճռուած է, որ Լուբէն Ռուսիա կայցելէ առաջիկայ ամառայ յունիսին։ Հասարակապետութեան նախագահը ափ կելնէ Պրո- [illegible]

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական մի քանի լրագրներ նկատում են, որ Բեռլինի տեղեակ շըրջաններում մեծ կասկածանքով է ընդունուած «Köln. Zeit.»-ին Պետերբուրգից հաղորդուած այն տեղեկութիւնը, թէ Ռուսիան և Ֆրանսիան միասին պիտի գործեն Հայաստանում և Թիւրքիայի եւրոպական գաւառներում ռեֆորմներ մտցնելու համար։ Հաւասարապէս անհաւանական է նաև այն լուրը, որ Ռուսիան և Ֆրանսիան իբրթէ պիտի հրաւիրեն դաշնագիրը ստորագրող միւս պետութիւններին, որ միանան իրենց ընդհանուր գործողութիւններին։ Ցարդ ոչ թէ միայն որևէ շարժառիթ չկայ այդ կոնֆերենցիան հրաւիրելու, այլ և նշաններ չկան, որ այդպիսի մի շարժառիթ կարող լինէր որոշ ժամանակում ծագել։

—Կ. Պոլսից հեռագրում են, որ հոկտեմբերի 27-ի առաւօտեան վախճանուել է մեծ վեզիրը։

—Բեռլինում ասում են, որ Գերմանիան ֆրանս-թրքական ընդհարման մէջ բոլորովին չէզոք է պահում իրեն և այդ պարագայում շահագրգռուած է այնքան միայն, որքան գործը կարող է վերաբերուել խաղաղութեան պահպանմանը և դաշնագրերին։

—Լոնդոնից Պարիզում ստացուած հեռագրները վճռապէս հերքում են այն լուրը, որ Թիւրքիան իբրթէ խնդրել է Անգլիայի միջնորդութիւնը ֆրանս-թըրքական վէճի համար:—«Matin»-ի Լոնդոնի թղթակիցը հեռագրում է, թէ անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը պաշտօնապէս յայտարարել է, որ Անգլիան չէզոք կըմնայ և գոհունակութեամբ կընայէ, եթէ սուլթանին սրտի իրեն վաղուց արժանի դասը։

—Իտալական կիսապաշտօնական «Tribuna» լրագիրն ասում է, թէ հիմք չկայ երկիւղ կրելու, որ ֆրանս-թրքական վէճը տարածուի միւս պետութիւնների վրայ։ Իտալիան այն դէպքում միայն ապարէզ կըմտնի, եթէ status quo-ն Միջերկրական ծովի վրայ վտանգի ենթարկուելու լինի։ Լրագիրը հաւանական է համարում, որ վէճը լուծուի խաղաղութեամբ, և աւելացնում է, թէ Իտալիան յամենայն դէպս ապահովուած է, որովհետև Ֆրանսիան ձեռք չի տալ Տրիպոլսի հողերին։

—«Echo de Paris»-ն հաղորդում է, թէ Դելկասէն Դրանը որոշ ժամանակ կըտայ Ֆրանսիայի պահանջները կատարելու համար։ Այդ ժամանակը լրանալուց յետոյ Կալեարը նոր յանձնարարութիւններ կըստանայ և, յամենայն դէպս, երկար ժամանակ կըմնայ թրքական ջրերում։

—Հեռագիրը Միտիլէ կղզուց հաղորդում է, որ ծովակալ Կալեարը գրաւել է տեղական մաքսատները, առանց որևէ դիմադրութեան հանդիպելու.—Պետութիւններին Պարիզից շըջաբերական յայտագիր է ուղարկուած, որի մէջ արտայայտուած են Ֆրանսիայի դիտաւորութիւնները։ Պետութիւնների կողմից ցարդ ստացուած պատասխաններից երևում է, որ ֆրանսական յայտագիրն ամեն տեղ ընդունուած է համակրութեամբ:

—«Կեօլնի լրագիրը» հաղորդում է, որ Բեռլինի ֆրանսական դեսպանը բացատրութիւններ է ներկայացրել ֆրանսական ծովային արշաւանքի մասին։ Այդ բացատրութիւնների մէջ ասւում է, որ «Ֆրանսիան ամենևին դիտաւորութիւն չունի հողեր գրաւելու։ Նաւատորմիղը Միտիլէ ուղարկուելու նպատակն է երաշխաւորութիւն ստանալ, որ կըվճարուեն պահանջուած այն գումարները, որոնց վճարումը շատ անգամ արդէն խոստացուել է, և ապահովութիւն [illegible]

—Բ. Դուռը նոյեմ. 24-ի երեկոյեան

ֆրանսական դեսպանատան խորհրդական Բապատին մի յայտագիր ուղարկեց, որի մէջ հաղորդում է, թէ համաձայնութիւն է տրուած վերականգնելու կամ վերանորոգելու զանազան վիլայէթներում գտնուած եկեղեցիները, վանքերը և ուրիշ հաստատութիւններ, թւով ընդամենը 16:

— Լօնդօնից հեռագրում են հոկտ. 28-ից. «Դիլդհօլում պատասխանելով մինիստրների կենացին, լորդ Սոլսբրին ասաց, թէ ներկայ ժամանակն աւելի դժուար ժամանակ է, քան մի քանի տարի առաջ, բայց «մենք կատարեալ հիմք ունինք չնորհաւորելու մեզ. ընդհանուր խաղաղութիւնն, առհասարակ ասած, չի երերուած. ճիշտ է, Միջերկրական ծովում վերջին չաբաթներս մի թեթև ամպ էր երևացել, բայց այդ ամպը ցրուեց. սա նոյնպէս խոշոր հետևանք է. յիսուն տարի առաջ այսպիսի մի անցք այսպիսի աննշան հետևանքներ չէր ունենայ: Իսկական լուրջ անցքեր չկան, եթէ չհաշուենք Հարաւային Աֆրիկայում տեղի ունեցող պատերազմը, բայց այդ պատերազմն էլ չպէտք է յոռետեսական տրամադրութիւն ներշնչէ, որովհետև դա ոչ մի հիմք չունի: Ցաւօք յաղթութիւններն աջող վախճան կունենան: Պատերազմի վախճանն այնքան էլ մօտիկ չէ, ինչպէս մենք յոյս ունէինք. բայց մեր երկիրը գլխաւորապէս այն բանից էր ծագել, որ մենք չէինք հասկացել պատերազմի իսկական բնաւորութիւնը: Այդ պատերազմը սովորական պատերազմ չէ. եւրոպական պատերազմների ժամանակ շատ յաճախ պատահում էր, որ պարտիզանական պատերազմը շարունակւում էր կարծուածից աւելի երկար: Ես պէտք է կրկնեմ, որ մենք իւրաքանչիւր չաբաթ էական աջողութիւններ ենք ունենում: Մեր քաղաքականութիւնը մնում է անփոփոխ. մեր ամենալաւ ցանկութիւնն այն է, որ այն գաւառներում, որտեղ այժմ տեղի ունի պատերազմը, հաստատուի խաղաղութիւն և ազատութիւն, որպէսզի այդ գաւառները կարելոյն չափ շուտով սկսեն վայելել ինքնավարութեան բարիքները: Սակայն բուէրների անկախութիւնը վնասակար է մեր ապահովութեան համար. անգլիական ազգը վճռել է, որ այս սախսափելի պատերազմը երբէք այլ ևս չպիտի նորոգուի. մենք պէտք է ոչնչացնենք բուն իսկ պատճառն այն վտանգի, որ գոյութիւն ունի մեր կայսրութեան այդ անկիւնում. Անգլիայի կենսական շահերը պահանջում են, որ մենք աջողութեամբ վերջացնենք պատերազմը»:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հին-Նախիջևան, պ. Ալ. Պ.-ին.— «Մամուլ» ապագրական ընկերութեան կանոնադրութիւնը (պայմանագիրը) տպւում է. երբ պատրաստ լինի, ինչպէս իմացել ենք, մի-մի օրինակ կուղարկուի ընկերութեան անդամ գրողներին:

—

Ղուբա, արժ. Խ. քահ. Փ.-ին: — Կարդացէք վերև տպուած պատասխանը: Ցաւում ենք, որ չենք կարող անյապաղ կատարել ձեր խնդիրքը:

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների խորհուրդը խոնարհաբար խնդրում է պ.պ. անդամներին չնորհ բերել

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

որ տեղի է ունենալու նոյեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 9 ին, ժողովարանի անյետաձգելի կարիքների համար:

(766) 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, հոկտեմբերի 30-ին աւագների խորհրդի որոշմամբ կլսարքուի

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

(769) 3—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Հինգշաբթի, նոյեմբերի 1 ին

Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը մասնակցութեամբ Տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ կըներկայացնէ առաջին անգամ Ֆուլդի կոմեդիան

ՈՍԿՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՏԵՒԻՑ

4 արարուածով: Թարգ. Ս. Արտէմեանի: Մասնակցում է ամբողջ խումբը: Սկիզբը ժամը ճիշտ 8 ին: Տեղերի գները իջեցրած են: Տոմսակները ծախւում են միմիայն չվէյցարի մօտ:

(770) 2—1

«ԴԷՊԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ»

գրքի տպագրութիւնը վերջանում է: Պատրաստւում են կլիշէներ:

(768) 5—1 Արշակ Կայծունի

Լոյս տեսան եւ վաճառւում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1902 Թ.

Պատի և ծոցի (Ջիբակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարուած է Գ. եպ. Սրուանձտեանի, Գամառ-Քաթիպայի, Գ. Աբծրունու և Գ. Ջանշեանի պատկերներով, ունի բոլորովին նոր հետաքրքրական յաւելուած ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան և նոր զուարճալի վիճակարան:

—

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ և ընտիր մտքեր, հայոց և եկեղեցական պատմութիւնից հատուածներ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առարկաներ (մեծ մասամբ անտիպ), այլ և ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, չուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքրական տեղեկութիւններ:

Տախտակը շքեղ և ճաշակով պատրաստուած է յայտնի լիտօգրաֆիայում 15 գոյնով:

Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տպագրուած առանձին թերթով կարող են ստանալ ձրի

Գները ամեն տեղ ծոցինը—20 կ., պատինը—50 կ., գումարով գնողներին լինում է զիջում:

Դիմել՝ Александрополь, Карапету Апинянъ, կամ Alexandropole, Karapet Apinian (Caucase).

Ցանկացողները թող շտապեն, որ իբր ժամանակին կարողանանք պատուէրները ճշտութեամբ կատարել:

(759) 0—3



ГОРЬКАЯ ВОДА
САКСЛЕНЕРА
ИСТОЧНИКА
„ГУНЯДИ ЯНОСЪ"
СЛАБИТЕЛЬНАЯ ВОДА
ДѢЙСТВУЕТЪ ЛЕГКО и ВѢРНО.
ПРЕИМУЩЕСТВА:
МЯГКІЙ НЕ ПРОТИВНЫЙ ВКУСЪ,
МАЛАЯ ДОЗА.
ВО ИЗБѢЖАНІЕ ПОДДѢЛОКЪ ПРОСИМЪ
ОБРАЩАТЬ ВНИМАНІЕ
на изображенную здѣсь
МАРКУ ПОРТРЕТЪ
которая неизмѣнно находит. на этикетѣ каждой бутылки настоящ. нашей воды.

ПРЕДПИСЫВАЕТСЯ ВРАЧЕБНЫМИ АВТОРИТЕТАМИ ВЪ ТѢХЪ СЛУЧАЯХЪ, КОГДА ТРЕБУЕТСЯ УПОТРЕБЛЕНІЕ ЛЕГКАГО НО ВѢРН. СЛАБИТЕЛЬНАГО. ДЛЯ НОРМАЛЬНАГО ПРІЕМА ДОСТАТОЧНО ½ ОБЫКНОВЕННАГО СТАКАНА.
МНОГО МИЛЛІОНОВЪ
БУТЫЛОКЪ ЕЖЕГОДН. СБЫТА.
ЯСНО ДОКАЗЫВАЮТЪ БЕЗВРЕДНОСТЬ СЛАБИТЕЛЬНОЙ ВОДЫ ЭТОГО НАТУРАЛЬНАГО МИНЕРАЛЬН. ИСТОЧНИКА.
Продается у всѣхъ дрогистовъ и аптекарей.

(M.) № 202933 12—10

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ

[Capsules au Matico]

ԺՐԻՄՈ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ

Թոյլ է տրուած Ռուսիայում:



Աջողութեամբ գործ է ածւում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չյոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում Կոպայի բալզամը հեղուկ ձևով:

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:

(M,) № 7728 23—18

! ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ !

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ

ՕՃԱՌ

ԴԵՂԱԳՈՐԾ

Գ. Փ. ԻՒՐԳԵՆՍԻ

Ոչնչացնում է մուները, արևից այրուածքը, դեղին բծերը, ելունդները, բշտիկները և ազդում է աւելորդ քրտնելու դէմ: առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ:

Մի կտորի գինը 50 կ., ½ կտորին 30 կ. Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում.

Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Փ. Իւրգենսի մօտ, Մոսկուայում:

(M.) № 192764 24—20

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և գեղեցկութեամբ ամենանըշանաւոր դերասանուհիները հրաժարուեցին գործածել ԿՈՅԼԴ ԿՐԵՄ (Cold Creme, որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին: Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փըտանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը:

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) Le savon à la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները:

J SIMON, 13 rue Grande Batèlicre. Paris. Մաս-մաս վաճառւում է վարսավիրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ:

(M.) № 136953. 18—3

МЫЛО БѢЛАЯ СИРЕНЬ
МЫЛО ВІОЛА ВІОЛЕТТА
МЫЛО РОЗА РОЗИТА
№ 4711
МЫЛО ОРИВІОЛА
МЫЛО „LA BARONESSE"
МЫЛО „LILY OF THE VALLEY"
ПРІОБРѢЛИ БЛАГОДАРЯ СВОЕМУ ВЫДАЮЩЕМУСЯ КАЧЕСТВУ И ЧУДНОМУ ЗАПАХУ БОЛЬШУЮ ПОПУЛЯРНОСТЬ СРЕДИ ПУБЛИКИ.

(M.) №128427/27 10—4

ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

առաջարկում է
դէմքի և ձեռքերի սպիտակութեան
համար միջոց՝

„ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԵՐ"

30 կոպ.

(M) 95194 10—4

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку Пречещная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են ատտեստատներ: Կուրսերում աւանդւում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային 3) առևտրական թղթակցութիւն. 4) առևտրական տնտեսագիտութիւն. 5) առևտրական մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագրումն ձեռագրի): Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն այն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» Բաքւում բաժանմունքում: Կուրսերի կանոնագրութիւնը уставъ մանրամասն ծրագիր և արւում են և ուղարկւում են ձրիաբար: Օտարաքաղաքացիները դիմում են учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ Каспарову, Баку.

(678) 25—25

ՊԱՐԻԶԻ ԴԵՂԱԳՈՐԾԻ

ՍԱՆՏԱԼ ՄԻԴԻ

ԹՈՅԼ Է ՏՐՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ

SANTAL MIDY

Այս կապսիւլների մէջ պարունակուած զուտ սանտալի էսսենցիան բժիշկները խորհուրդ են տալիս գործածել հոնորէի (գաղտնի հիւանդութիւնների) դէմ կապայ-բալզամի և կուբեբայի դէմ: Սա ներգործում է աւելի արագ, չի յոգնեցնում ստամոքսը, ոչ մի հոտ չի պատճառում և ոչնչանում է փսխումն ու կէտիկը: Կեղծիքներից խուսափելու համար պահանջեցէք, որ իւրաքանչիւր կապսիւլի վրայ լինի սև տառերով դրոշմած՝ «ՄԻԴԻ»: Պահեստը Ռուսիայի գլխաւոր դեղատներում

MIDY

(M.) № 200369 60—41

КОНКУРСЪ

По составленію эскизнаго проекта народнаго дома имени Константина Яковлевича Зубалова, въ г. Тифлисѣ.

Комитетъ по постройкѣ народнаго дома въ г. Тифлисѣ, состоящій при тифлисскомъ обществѣ трезвости, объявляетъ конкурсъ, для всѣхъ желающихъ, на составленіе эскизнаго проекта народнаго дома на слѣдующихъ условіяхъ:

1) Народный домъ предположено построить въ X участкѣ г. Тифлиса, на углу Кирочной и Великокняжеской улицъ, на участкѣ мѣрою 563 квадр. саж. Участокъ безъ покатости, горизонтальный, Ширина улицъ безъ тротуаровъ—пять саженъ. Ширина тротуаровъ—два арш. Длина фасадовъ участка: по Кирочной улицѣ—23,82 саж., а по Великокняжеской—23,6 саж. Планъ участка составленъ городскимъ землемѣромъ Ларіоновымъ.

2) Народный домъ долженъ вмѣстить въ себѣ: а) залъ со сценой на 600 человѣкъ: залъ этотъ долженъ служить для сценическихъ представленій, чтеній, а также для танцовальныхъ, дѣтскихъ и т. п. собраній. При сценѣ должны имѣться всѣ необходимыя помѣщенія, связанныя съ сценическими представленіями: уборныя и т. п. Помѣщенія эти могутъ быть расположены и подъ сценой: б) чайную на 200 человѣкъ; в) читальный залъ на 50 человѣкъ съ отдѣльными помѣщеніями для библіотеки и книжнаго склада; г) помѣщеніе для сторожей. При проектированіи должно имѣть въ виду расширеніе зданія въ будущемъ устройствомъ народной столовой съ кухней.

3) На постройку дома ассигновано наслѣдниками К. Я. Зубалова семьдесятъ тысячъ руб. Фасадъ съ главнымъ входомъ примыкаетъ непосредственно къ улицѣ. Фасадъ по другой улицѣ долженъ отступать на четыре сажени для устройства садика. Между зданіемъ народнаго дома и границами сосѣднихъ участковъ должны быть оставлены проѣзды минимальной требуемой стр. уставомъ ширины.

4) За лучшіе проекты наслѣдники К. Я. Зубалова устанавливаютъ двѣ преміи: въ пятьсотъ и триста рублей. Преміи эти будутъ выданы по постановленію особаго жюри въ Тифлисѣ, гдѣ состоится конкурсъ. Въ члены жюри не будутъ входить ни жертвователи, ни члены комитета, и рѣшеніе названнаго жюри по присужденію премій будетъ окончательное.

5) Конкурсъ можетъ состояться только по представленіи не менѣе трехъ проектовъ, причемъ жюри имѣетъ право признать конкурсъ несостоявшимся, если найдетъ представленные проекты неудовлетворяющими требованіямъ, предъявляемымъ къ народнымъ домамъ вообще, или по другимъ причинамъ.

Жюри имѣетъ право подраздѣлить первую премію на двѣ равныя или неравныя части по своему усмотрѣнію, если изъ представленныхъ проектовъ не найдетъ достойнаго первой преміи. Составъ жюри будетъ объявленъ по образованіи его.

6) Всѣ премированные проекты поступаютъ въ полную собственность комитета. Непремированные проекты могутъ быть пріобрѣтены комитетомъ по свободному соглашенію послѣдняго съ авторами ихъ, если таковое пріобрѣтеніе признано будетъ желательнымъ комитетомъ.

7) Автору перваго премированнаго проекта, а за отказомъ его—автору второго комитетъ предложитъ разработку окончательнаго проекта по постройкѣ дома съ правомъ пользоваться всѣми премированными проектами, при условіи внесенія въ эскизные проекты всѣхъ измѣненій, какія найдетъ нужными комитетъ. Вознагражденіе за этотъ трудъ комитетъ назначаетъ въ размѣрѣ 1% съ ассигнованныхъ 70.000 руб. Что касается техническаго надзора за производствомъ работъ по постройкѣ, то выборъ лица для этого всецѣло зависитъ отъ наслѣдниковъ К. Я. Зубалова, принимающихъ на себя всецѣло хозяйственную и финансовую сторону осуществленія постройки, съ участіемъ одного члена комитета по выбору послѣдняго.

8) Эскизный проектъ долженъ состоять изъ фасадовъ, плановъ, разрѣзовъ—въ установленномъ масштабѣ, съ пояснительной запиской и краткой смѣтой.

9) Конкурсъ состоится въ г. Тифлисѣ, причемъ всѣ проекты должны быть представлены не позже 12 часовъ дня 2 февраля 1902 года на имя члена комитета князя Георгія Михайловича Туманова по адресу: г. Тифлисъ, Барятинская улица, домъ князя Туманова.

Всѣ чертежи, записки и смѣты должны быть ясно помѣчены девизомъ или знакомъ. Подъ тѣмъ же девизомъ или знакомъ представляется въ наглухо запечатанномъ конвертѣ—званіе, имя, отчество и фамилія автора, а также и его подробный адресъ.

10) Преміи выдаются комитетомъ въ двухнедѣльный срокъ со дня объявленія комитету рѣшенія жюри.

11) Жюри имѣетъ право пригласить въ свои засѣданія по оцѣнкѣ проектовъ всѣхъ лицъ, коихъ оно найдетъ полезными для себя, но безъ права голоса.

12) Желающіе участвовать въ конкурсѣ могутъ получать копіи плана мѣста и другія свѣдѣнія отъ Георгія Михайловича Туманова.

13) Непремированные проекты возвращаются авторамъ по предъявленіи расписокъ почтовыхъ или выданныхъ комитетомъ, безъ вскрытія конвертовъ. (Մ/ք.) 3—2

Доз. цензурою Тифлисъ, 1901 октября 29-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387